

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Յիսուս եւ
Չաքոս



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Alastair Paterson

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1

Canada

©2020 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.





Օրը մը Յիսուս
Երիբովէն կ'անցներ:
Այս քաղաքը
քանդուած
էր երկար
ժամանակէ ի
վեր ճոշուային
ձեռքով: Հիմա
վերաշինուած
էր հոն ապրող
ժողովուրդին
ձեռքով: Անոնց մէջ
մարդ մը կար, որ
Չաքէոս կը
կոչուէր:







Հաւանաբար Երիբոյի մնացեալ
ժողովուրդը չէին սիրեր Չաքեոսը,
որովհետեւ տուրք կը հաւաքէր
իրենցմէ: Չաքեոս դրամին մէկ մասը
կառավարութեան կը դրկէր, բայց
մեծամասնութիւնը իրեն կը պահէր:




Տուրք հաւաքելով Չաքոս շատ հարուստ էր: Անոր
տունը ամենամեծը եւ ամենալաւն էր իր թաղին
մէջ:



Բայց ան շատ
կարճահասակ էր,
ոչ թե քիչ դրամ
ուներ, բայց քիչ
հասակ ուներ:
Չաքեոս ուրիշ
մարդոց նման
հասակ չէր
առած:






Երբ Չաքոս լսեց,
թե Յիսուս Երիբոյ է,

այս կարճահասակ

տուրք հաւաքողը ուզեց Նազարեթի մարդը
տեսնէ, որ ինքզինք Աստուծոյ զաւակը հռչակած
է: Բայց բազմութիւնը շատ խիտ էր...
մարդիկն ալ երկարահասակ էին:







Չաքեոս գաղափար
մը ունէր: Եթէ միայն
կրնար բազմութեան
առջեւը անցնիլ...
ճամբուն եզերքը
ծառին վրայ մագլցիլ...
պիտի կարենայ
Յիսուսը տեսնել:




Մագլցելով մուլաթգենի ծառի մը
վրայ, Չաքեոս հանգիստ տեղ մը
գտաւ ճիւղերուն վրայ
եւ նստաւ սպասելու
Յիսուսի. "Լաւ պիտի
տեսնեմ", մտածեց
ան, "ես իրեն պիտի
տեսնեմ առանց որ
մեկը զիս տեսնէ":



Չաքեոս չէր հաւատար
իւրաքանչիւրին: Յիսուս
ծառին տակը կեցած
էր: Յիսուս իրեն կը
նայէր: Յիսուս
իրեն կը կանչէր:






Եթէ Չաքեոս
զարմացած էր
Յիսուսի ձայնէն,
որ զինք կը կանչէ,
ան զմայլած էր երբ
Յիսուս իրէն ըսաւ.
"Այդքան արագ
վար իջաւ, որ քիչ
մնաց պիտի
իյնար":



Չաքեոս շատ ուրախ էր, Յիսուս իր
տունը պիտի այցելէ, բայց ժողովուրդը
այս կացութիւնը չհամենցաւ: Անոնք
գանգատեցան, որ Յիսուս Չաքեոսի
նման մեղաւոր
մարդու մը
կ'այցելէ:






Յիսուս
ամբողջովին նոր
կեանք բերաւ
Չաքեոսի: Չաքեոս
ըսաւ. "Տէր, իմ կէս
ունեցուածքս
աղբատներուն
պիտի տամ: Եւ
եթէ մէկու մը
խաբեցի անոր
չորս անգամով
պիտի դարձնեմ":



Յիսուս գոհ էր Չաքեոսի
նոր կեանքէն: Ան կը
սիրէր տեսնել մարդիկ
մեղքի կեանքէ կը
դառնան ճիշդ
կեանքի, ըսաւ
Յիսուս. "Մարդու
որդին եկաւ,
որ փնտռէ եւ
ազատէ ան ինչ
որ կորսուած է":
Այդ օրերուն
Երիքովի մէջ
Յիսուս գտաւ
Չաքեոս:



Յիսուս եւ Չաքէոս


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 19


"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130





Կերջ

53



60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուն համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

